ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Այս երկրի ափերը ողողում են Խաղաղ օվկիանոսի արևմտյան ծովերի ջրերը, տարածքով այն Ասիայի ամենամեծ երկիրն է, իսկ աշխարհում գրավում է երրորդ տեղը:Տարածքը կազմում է 9.6 մլն կմ ²:

1) Ղազախստան
2) Չինաստան
3) Հնդկաստան
4) Ռուսաստան

2 **Տրվածներից ո՞ր մշակաբույսի պահանջն է Ճապոնիան ամբողջությամբ լրացնում իր գյուղատնտեսության շնորհիվ:**

1) շաքարակիրներ
2) թեյ
3) բրինձ
4) արմավ

3 **Ծովի մակարդակի համեմատ, իր միջին բարձրությամբ Աֆրիկան զիջում է միայն.**

1) Հս. Ամերիկային և Հվ. Ամերիկային
2) Անտարկտիդային և Եվրասիային
3) Ավստրալիային և Հվ.Ամերիկային
4) Հս Ամերիկային և Եվրասիային

4 **Վաղինները չոր գետահուներ են, որոնք հանդիպում են.**

1) Աֆրիկայում
2) Անտարկտիդայում
3) Եվրասիայում
4) Ավստրալիայում

5 **Տրված լեռնային համակարգերից ո՞րը *չի* գտնվում Ասիայում:**

1) Ատլասի
2) Կարակորումի
3) Հինդիկուշի
4) Տիբեթի

6 **Պետություն-մայրաքաղաք զույգերից ո՞րը Հարավային Եվրոպայում *չէ:***

1) Ֆրանսիա – Փարիզ
2) Իսպանիա – Մադրիդ
3) Հունաստան – Աթենք
4) Իտալիա – Հռոմ

7 **Տրվածներից ո՞ր երկիրը *չունի* 100 միլիոնից ավել բնակչություն:**

1) Իսրայել
2) Պակիստան
3) Ինդոնեզիա
4) Բանգլադեշ

8 **Նշվածներից ո՞ր երկրի տարածքով է հոսում Դանուբ գետը:**

1) Գերմանիա
2) Ֆրանսիա
3) Իսպանիա
4) Իտալիա

9 **Տրված երևույթներից որում է խախտված *պատճառ-անմիջական հետևանք* կապը:**

1) Տեկտոնական սալերի տեղաշարժ – կլիմայի գլոբալ փոփոխություն
2) Ստորջրյա երկրաշարժ – ցունամի
3) Մշտական քամիներ – օվկիանոսային հոսանքներ
4) Գրավիտացիա – մակընթացություն և տեղատվություն

10 **Ներքնոլորտի ստորին շերտի ֆիզիկական վիճակը տվյալ պահին, որոշակի տարածքի վրա, կոչվում է.**

1) քամիների վարդ
2) կլիմա
3) եղանակ
4) կլիմագրամ

11 **Բնական զոնա – հողային տիպ – բուսական աշխարհի բնության բաղադրիչների զուգորդումներից որում կա *սխալ:***

1) Անապատներ – կարմրադեղնավուն հողեր – ֆիկուսներ
2) Տունդրա – տորֆաճահճային հողեր – մամուռներ
3) Տայգա – պոդզոլային հողեր – փշատերև ծառեր
4) Սավաններ – կարմրահողեր – բաոբաբ

12 **Ո՞ր լեռներն են հանդիսանում բնական սահման Ֆրանսիայի և Իսպանիայի միջև:**

1) Շվարցվալդի
2) Ալպեր
3) Պիրենեյան
4) Ատլասի

13 **Նշվածներից ո՞րը տարածքի մեծությամբ գերխոշոր երկրների խմբի մեջ չի մտնում:**

1) Հնդկաստան
2) Ավստրալիա
3) Չինաստան
4) Կանադա

14 **Նշվածներից ո՞րն է բացարձակ միապետություն:**

1) Մեծ Բրիտանիա
2) Օման
3) Նիդեռլանդներ
4) Նորվեգիա

15 **Նշվածներից ո՞րն է ունիտար երկիր՝ վարչատարածքային կառուցվածքով:**

1) Ֆրանսիա
2) Կանադա
3) Հնդկաստան
4) Գերմանիա

16 **Ինչպե՞ս է կոչվում որևէ փոքր տարածքի մանրամասն պատկերը հարթության վրա՝ որոշակի մասշտաբով և պայմանական նշաններով:**

1) հատակագիծ
2) քարտեզ
3) մասշտաբ
4) ազիմուտ

17 **Քարտեզների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) Ընդհանուր աշխարհագրական քարտեզների վրա պատկերվում են միայն բնական բաղադրիչները:
2) Որքան փոքր է մասշտաբի հայտարարը, այնքան խոշորամասշտաբ է քարտեզը:
3) Քարտեզները ընդգրկելով մեծ տարածքներ, պարունակում են շատ մանրամասներ:
4) Գունդը հարթության վրա պատկերելիս չեն առաջանում աղավաղումներ և ստացվում են գերճշգրիտ քարտեզներ:

18 **Նշվածներից ո՞րը եղանակաստեղծ տարր *չի* համարվում:**

1) մթնոլորտի թափանցիկությունը
2) մթնոլորտի ճնշումը
3) մթնոլորտի խոնավությունը
4) մթնոլորտի ջերմաստիճանը

19 **Տրվածներից ո՞րը *չի* համարվում բնատարածքային համալիրների բաղադրիչ:**

1) ջրագրական ռեժիմը
2) լեռնային ապարները
3) բույսերն ու կենդանիները
4) ազգերի էթնիկական կազմը

20 **Տրված երկրներից ո՞րը ունիտար *չի*:**

1) Հնդկաստան
2) Իրան
3) Թուրքիա
4) Ֆրանսիա

21 **Բնակչության ծնելիության կարգավորմանն ուղղված միջոցառումների՝ վարչական, տնտեսական,քարոզչական և այլն, համակարգը, որի միջոցով պետությունը ձգտում է կարգավորել ծնելիությունը նպատակահարմար ձևով, կոչվում է.**

1) ժողովրդագրական իրադրություն
2) ժողովրդագրական քաղաքականություն
3) ժողովրդագրական պայթյուն
4) ժողովրդագրական ճգնաժամ

22 **Ըստ մարդաշատության, ո՞ր խմբի մեջ են մտնում 500 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքները:**

1) խոշորագույն
2) մեծ
3) փոքր
4) խոշոր

23 **Ո՞ր երկրի սեռատարիքային բուրգն է պատկերված նկար 1-ում:**

1) Մեծ Բրիտանիա
2) Իտալիա
3) Ճապոնիա
4) Հնդկաստան



Նկար 1

24 **Միջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ ո՞ր պնդումն է** ***սխալ:***

1) Ապրանքների արտահանման և ներմուծման չափերով առաջատար երկրներից են Չինաստանը, ԱՄՆ-ն, Գերմանիան:
2) Տնտեսական հարաբերությունների ամենահին և ամենատարածված ձևը միջազգային առևտուրն է:
3) Առևտրային հաշվեկշիռը երկիր արտահանված և ներկրված ապրանքների և ծառայությունների արժեքային արտահայտության հարաբերությունն է:
4) Միջազգային զբոսաշրջությունն ու տեղեկատվության փոխանակումը ծառայությունների միջազգային առևտրի ձևերից են:



Քարտեզ 1

25 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Կարակաս մայրաքաղաքը:**

1) Ը
2) Ե
3) Զ
4) Է

26 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր ծովային հոսանքն է նշված Ա տառով:**

1) Բենգելյան
2) Կալիֆոռնիական
3) Պերուական
4) Ֆոլկլենդյան

27 **Տրված պետություններրից ո՞րը ներկայումս չի գտնվում ԱՊՀ կազմում:**

1) Ուզբեկստան
2) Հայաստան
3) Վրաստան
4) Ղազախստան

28 **Տրվածներից ո՞րը բարձր զարգացած երկրների առաջին ենթատիպում գտնվող երկիր *չէ:***

1) Իտալիան
2) Գերմանիան
3) Ֆրանսիան
4) Իսպանիան

29 **Քարտեզի վրա միատեսակ մթնոլորտային ճնշում ունեցող, փակ, կոր գծերը կոչվում են.**

1) իզոկոլներ
2) իզոթերմեր
3) իզոբարեր
4) իզոհիետներ

30 **Ըստ պետությունների կառավարման այս ձևի, իշխանությունը փոխանցվում է ժառանգաբար և պետությունը կառավարվում է միապետի՝ թագավորի, կայսրի, սուլթանի և այլոց կողմից:**

1) խորհրդարանական հանրապետություն
2) բացարձակ միապետություն
3) նախագահական հանրապետություն
4) համադաշնություն

31 **Երկրագնդի վրա բնակչության անհավասարաչափ տեղաբաշխման վրա ազդող բնական գործոններից *չէ:***

1) արտադրության զարգացման մակարդակը
2) ռելիեֆը
3) ջրագրական ցանցը
4) հողակլիմայական պայմանները

32 **Ինչպե՞ս են կոչվում որևէ երկրի 15-65 տարեկան բնակչությունը, որոնք իրենց ֆիզիկական զարգացմամբ, անհրաժեշտ գիտելիքներով, փորձով կարող են աշխատել տնտեսության որևէ ճյուղում:**

1) տնտեսապես ակտիվ բնակչություն
2) աշխատանքային ռեսուրսներ
3) բնակչության վերարտադրություն
4) բնակչության տարիքային կազմ

33 **Ընտրել ճիշտ պնդումը:**

1) Զարգացած երկրներին բնորոշ է «կեղծ ուրբանացումը»:
2) Խոշոր քաղաքների արվարձանների սրընթաց աճի երևույթն անվանում են սուպերուրբանացում:
3) ԱՄՆ-ում ձևավորված խոշոր մեգալոպոլիսներն են Բոսվաշը, Չիփիթսը և Սան-Սանը:
4) Քաղաքային բնակչության բաժնի ավելացման, քաղաքների դերի բարձրացման և քաղաքային ապրելակերպի տարածման պատմական գործընթացը կոչվում է տարաբնակեցում:

34 **Բնական ռեսուրսների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:**

1) Հողը յուրահատուկ ռեսուրս է, որը շատ դանդաղ է վերականգնվում:
2) Վառելիքային օգտակար հանածոներն ունեն նստվածքային ծագում:
3) Աշխարհում պղնձի տարածման խոշորագույն շրջաններից է Անդյան լեռնային համակարգը:
4) Աշխարհի բոլոր երկրներն ու տարածաշրջանները հավասարաչափ ապահովված են բնական ռեսուրսներով:

35 **Ինքնաթիռը գտնվում է մի օդանավակայանում, որի աշխարհագրական կոորդինատներն են հյուսիսային լայնության 45° և արևմտյան երկայնության 80°: Որո՞նք կլինեն ինքնաթիռի կոորդինատները, եթե ինքնաթիռը 444 կմ գնա դեպի հյուսիս, 444 կմ դեպի արևելք, 444 կմ՝ հարավ և 444 կմ՝ արևմուտք:**

1) հս. լ.45° և արլ.ե. 80°
2) հվ. լ.45° և արմ.ե. 80°
3) հս. լ.45° և արմ.ե. 80°
4) հվ. լ.45° և արլ.ե. 80°

36 **Տրվածներից ո՞րը *չի* համարվում հակակարկտային միջոցառում ՀՀ-ում:**

1) ինքնաթիռային
2) հակակարկտային ցանցեր
3) գազագեներատորային
4) ջրահեռացում

37 **Տրվածներից ո՞րը քիմիական արդյունաբերության ենթաճյուղ *չէ:***

1) սարքաշինության, ավտոմատացման միջոցների ու կառավարման համակարգերի արտադրական համալիր
2) ազոտային պարարտանյութերի և ազոտական այլ միացությունների համալիր
3) գունավոր մետալուրգիայի արտադրական թափոնների օգտագործման համալիր
4) բնական գազի հիմքի վրա կառուցված սինթետիկ կաուչուկի և այլ քիմիական միացությունների արտադրական համալիր

38 **Հայկական բարձրավանդակի (միջնաշխարհի) մաս *չի* համարվում:**

1) Հայկական կամ Արևելյան Տավրոսը
2) Ներքին Տավրոսի լեռնային համակարգը
3) Հայկական հրաբխային բարձրավանդակը
4) միջլեռնային գոգավորությունները

39 **Թվարկված բնական աղետներից ո՞րը բնորոշ *չի* ՀՀ-ին:**

1) երկրաշարժերը
2) սելավները
3) սողանքները
4) ցունամիները

40 **Հողաբարելավման ո՞ր տեսակին են պատկանում լանջերի հերկումը լայնակի ուղղությամբ, ճմապատումը և դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը:**

1) ցամաքեցում
2) հակաէրոզիոն միջոցառումներ
3) քիմիական մելիորացում
4) արհեստական ոռոգում

41 **Քարտեզ 2-ում ո՞ր տառով է նշված Ջավախքի լեռնաշղթան:**

1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ

Քարտեզ 2

42 **Քարտեզ 2-ում ո՞ր տառով է նշված Վեղի գետը:**

1) Ը
2) Ե
3) Զ
4) Է

43 **Սպասարկման ոլորտի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Հասարակության զարգացմանը համընթաց՝ ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի դերը բարձրանում է:
2) Գոյություն ունեն ամենօրյա, դրվագային և պարբերական ծառայություններ:
3) Ինչքան մեծ է պահանջարկի հաճախականությունը, այնքան ծառայություններ մատուցող հաստատությունները պետք է մոտիկ լինեն բնակչությանը:
4) Այն հաստատությունները, որոնք գտնվում են տարբեր տարածքներում և չունեն փոխադարձ կապեր, առաջացնում են սպասարկման տարածքային համակարգ:

44 **Որոշակի իրավական ձևի շրջանակներում գործադիր իշխանության մարմինների նպատակաուղղված ներգործությունը կառավարվող սուբյեկտի վարքագծի վրա՝ շրջակա միջավայրի պահպանության եւ բնական ռեսուրսների ռոլջամիտ օգտագործման նպատակով, կոչվում է.**

1) գործարար կենսունակություն
2) բնապահպանական կառավարում
3) կայուն արտադրություն և սպառում
4) բնապահպանական մոնիթորինգ

45 **Տրվածներից ո՞րը կայուն գյուղատնտեսության կառուցվածքային բաղադրիչ *չէ:***

1) անվտանգ կերարտադրության կազմակերպումը
2) կենսատեխնոլոգիա և գենային ինժիներիա
3) գյուղատնտեսական թափոնների կառավարում
4) գյուղատնտեսական հողահանդակների քայքայումը

46 **Ըստ կիրառվող մշակության տեխնոլոգիաների ինտենսիվության բնույթի գյուղատնտեսության ուղղություններից *չէ.***

1) փայտամշակում
2) էքստենսիվ գյուղատնտեսություն
3) պերմամշակություն
4) ինտենսիվ գյուղատնտեսություն

47 **Աշխարհագրական թաղանթի կենդանի բնության բաղադրիչ է.**

1) ջրոլորտը
2) քարոլորտը
3) կենսոլորտը
4) մթնոլորտը

48 **Այս բույսերն իրենց մեջ պարունակվող տարբեր նյութերի՝ եթերայուղեր, ալկալոիդներ, վիտամիններ և այլն, միջոցով մարդու օրգանիզմի վրա ունենում են հակաբորբոքային, ցավազրկող, քնաբեր, հանգստացնող և այլ բնույթի բուժիչ ազդեցություն: Դրանք են.**

1) կերաբույսերը
2) պարենային բույսերը
3) դեղաբույսերը
4) տեխնիկական բույսերը

49 **Կենսաբազմազանության վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է *սխալ:***

1) Շատ երկրներում գյուղատնտեսական, կառուցապատման և այլ նպատակներով չորացնում են հսկայական տարածություններ զբաղեցնող ճահիճներ եւ ճահճակալած հողեր,որոնք շատ թռչունների բնադրման եւ ձմեռելու վայրեր են:
2) Հողագոյացման գործընթացը և հողի բերրիությունը հիմնականում պայմանավորված են կենդանիների (հատկապես՝ մրջյունների, որդերի, տերմիտների, տարբեր տեսակի բակտերիաների) գործունեությամբ:
3) Կենդանիներն ունեն ռելիեֆագոյացնող նշանակություն:
4) Նախնադարյան մարդու առաջին հիմնական զբաղմունքը գիտնականները համարում են ոռոգովի հողագործությունը:

50 **Ինքնատիպ տարածաշրջանների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Տնտեսական սրընթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական երկրների ժամանակակից տնտեսության ձեւավորման մեջ ամբողջովին բացառվել է օտարերկրյա ներդրումների բաժինը:
2) Ինքնատիպ տարածաշրջանները ձևավորվում են բացառապես մեկ գործոնի ազդեցությամբ:
3) Ինքնատիպ երկրներից են տնտեսական սրընթաց աճ արձանագրած «նոր արդյունաբերական» պետությունները:
4) Նոր արդյունաբերական երկրների զարգացման հիմքը կազմում են էքստենսիվ գյուղատնտեսությունը և արդյունահանող արդյունաբերությունը:

51 **Ստորև թվարկվածներից ո՞րը չի համարվում մարդկության համամոլորակային հիմնախնդիր:**

1) հազարամյակի զարգացման նպատակները
2) զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետեւանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը
3) տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը
4) մոլորակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը

52 **Որքա՞ն է Երկրի միջին շառավիղը:**

1) 6375 կմ
2) 6371 կմ
3) 6357 կմ
4) 6378 կմ

53 **Հողմնահարման ինչպիսի տեսակ գոյություն *չունի:***

1) աշխարհագրական
2) քիմիական
3) ֆիզիկական
4) կենսաբանական

54 **Փոքրաթեք լանջերի վրա հալչող գերխոնավ հողերի կամ գրունտների փոքր շերտերի համեմատաբար դանդաղ տեղաշարժը, որը կատարվում է ձգողական ուժերին գումարվող սառցածին երևույթների հետևանքով, կոչվում է.**

1) սոլիֆլյուկցիա
2) էրոզիա
3) սուբդուկցիա
4) կոնվեկցիա

55 **Տրվածներից ո՞րը չէ համարվում գետերի ջրհավաք ավազանի մուտքի բաղադրիչ:**

1) մակերևույթային հոսքերը
2) տրանսպիրացիան բույսերի միջոցով
3) մթնոլորտային տեղումները
4) արտահոսքը ստորգետնա ուղիներով

56 **Ընտրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծագում ունեցող լեռները:**

1) Փամբակ
2) Արևելապոնտական
3) Սավալան
4) Հայկական պար
5) Արագած
6) Բյուրակն
7) Հայկական Տավրոս
8) Ծաղկունյաց

57 **Ընտրել այն բնակավայրերը, որոնք գտնվում են Տավուշի մարզում:**

1) Ալավերդի
2) Բերդ
3) Ճամբարակ
4) Իջևան
5) Վանաձոր
6) Դիլիջան
7) Թումանյան
8) Նոյեմբերյան

58 **Ընտրել ՀՀ այն մարզերը, որոնք սահման ունեն Ադրբեջանի հետ:**

1) Կոտայք
2) Տավուշ
3) Լոռի
4) Արագածոտն
5) Շիրակ
6) Վայոց ձոր
7) Արմավիր
8) Արարատ

59 **Ընտրել այն երկրների համարները, որոնք ապահովված են նավթի պաշարներով:**

1) ՌԴ
2) Սաուդյան Արաբիա
3) Իրան
4) Գերմանիա
5) Հայաստան
6) Կանադա
7) Ճապոնիա
8) Իտալիա

60 **Ընտրել այն երկրների համարները, որոնք համարվում են «նոր արդյունաբերական»:**

1) Նորվեգիա
2) Սինգապուր
3) Սուդան
4) ՀԱՀ
5) Կանադա
6) Մալայզիա
7) Հարավային Կորեա
8) ՌԴ

61 **Ընտրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի Միջերկրական ծով:**

1) Մարոկկո
2) Պորտուգալիա
3) Իսպանիա
4) Հունաստան
5) Հորդանան
6) Չադ
7) Ռումինիա
8) Եթովպիա

62 **Հրազդան գետի վրա կառուցված ջրէկ-ները գրել հարավից հյուսիս հաջորդականությամբ:**

1) Քանաքեռի
2) Արգելի
3) Արզնու

63 **Գրել տրված պետություններն ըստ տարածքի մեծության նվազող հաջորդականությամբ:**

1) Ֆրանսիա
2) Կանադա
3) Չինաստան

64	Գետի միջին լայնությունը 15մ է, միջին խորությունը 50 սմ, գետի ջրի արագությունը 50մ/վ: Հաշվել գետի ծախսը ($մ^3$/վ):

65	Երկրում երկաթի հետախուզված պաշարները 250մլն.տ. են, իսկ տարեկան հանույթը 5 մլն.տ.: Քանի՞ տարի կբավարարի երկաթի պաշարները, եթե հանույթի տարեկան արդյունահանման ծավալները չփոխվեն:

66	Հաշվել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սետեմբերի 23-ին Երևանում:

67 Օդի բացարձակ խոնավությունը 15գ/մ³ է, իսկ հագեցնելու համար անհրաժեշտ է 50 գ ջուր: Հաշվել հարաբերական խոնավությունը:

68 Ա քաղաքի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 50˚, արլ.ե. 15˚, իսկ Բ քաղաքի կոորդինատները՝ հս.լ. 45˚ և արմ.երկ 30˚: Որքան կլինի նրանց միջև գոտիական ժամանակների տարբերությունը:

69 **Մարդ բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք *սխալ:***

1) Էկոլոգիական ճգնաժամի դեպքում խախտվում են նյութերի բնական շրջապտույտը, համակարգի կապերը, միջավայրը սկսում է քայքայվել, նախկին բնական լանդշաֆտներն իրենց տեղը զիջում են ավելի ցածր արդյունավետություն ունեցող մարդածին լանդշաֆտներին:
2) Բնությունը մարդուն շրջապատող, նրա գոյությունն ապահովող բնական տարրերի երևույթների ամբողջությունն է:
3) Էկոհամակարգի գլխավոր հատկանիշներն են ինքնակարգավորումը և ինքնավերականգնումը:
4) Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ փոքրանում է մարդու ներգործությունը բնական միջավայրի վրա:
5) Քիմիական աղտոտման դեպքում տեղի է ունենում միջավայրի քիմիական հատկանիշների փոփոխություն:
6) Քիմիական ու մետաղաձուլական արդյունաբերությունը, վառելիքաէներգետիկան, ավտոմոբիլային տրանսպորտը, շինարարությունը, կենցաղային թափոնները համարվում են կենսաբանական աղտոտման աղբյուրներ:

70 **ՀՀ-ի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք *սխալ:***

1) Գտնվում է ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման գոտում:
2) Տարածքի մեծությամբ ու բնակչության թվով փոքր երկիր է և զիջում է աշխարհի ավելի քան 130 պետությունների:
3) ՀՀ-ն գտնվում է կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների (Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային եւ Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող) խաչմերուկում:
4) ՀՀ-ն տնտեսության զարգացման մակարդակով հետինդուստրիալ երկիր է:
5) Մոտ է գտնվում աշխարհի բարձր զարգացած երկրներին և հզոր տնտեսական կենտրոններին:
6) ՀՀ-ի ՏԱԴ-ը ժամանակի ընթացքում անփոփոխ է և նրա նպաստավոր հատկանիշերը մնայուն են: